



## Իմունականխարգելման եվրոպական շաբաթ

Սկսած 2005 թվականից՝ եվրոպական տարածաշրջանում ամեն տարի իրականացվում է «Իմունականխարգելման եվրոպական շաբաթ» նախաձեռնությունը՝ իմունականխարգելման մասին հանրության իրազեկվածությունը բարձրացնելու, պատվաստումների միջոցով բնակչությանը վարակիչ հիվանդություններից զերծ պահելու նպատակով: Այս տարի «Իմունականխարգելման եվրոպական շաբաթ» նախաձեռնությունը կմեկնարկի ապրիլի 27-ին և կշարունակվի մինչև մայիսի 3-ը:

Յուրաքանչյուր տարի Իմունականխարգելման եվրոպական շաբաթը հնարավորություն է ընձեռնում մեկ անգամ ևս ընդգծել հանրային առողջապահության ոլորտում պատվաստումների դերի կարևորությունը և գերակայությունը: «Իմունականխարգելման եվրոպական շաբաթ» նախաձեռնությունը կազմակերպվող հարյուրավոր միջոցառումների միջոցով՝ քաղաքային զբոսայգիներից մինչև խորհրդարաններ, սոցիալական կայքերից մինչև երեկոյան լուրեր, բարձրացնում է պատվաստումների վերաբերյալ հանրային իրազեկումը: Այս նախաձեռնության նպատակը բնակչության շրջանում պատվաստումների պահանջարկի բարձրացումն է, ինչպես նաև իմունականխարգելման քաղաքական աջակցության ապահովումը:

Եվրոպական երկրները օգտագործում են «Իմունականխարգելման եվրոպական շաբաթը», որպես հնարավորություն՝ բարձրացնելու բնակչության իրազեկումը կյանքի

բոլոր փուլերում պատվաստումների կարևորության վերաբերյալ: Այն մեկ անգամ ևս ընդգծում է մարդու կյանքի ողջ ընթացքում իմունականխարգելման կարևորությունը:

Եվրոպական երկրներում շարունակում են մնալ ընկալ խմբեր, որոնք յուրաքանչյուր տարի բերում են երեխաների և մեծահասակների շրջանում հիվանդությունների և նույնիսկ մահվան դեպքերի առաջացման, որոնք հնարավոր էր կանխել պատվաստումների միջոցով: Այս օրերին կարմրուկի առումով լարված համաճարակային իրավիճակ է ինչպես Հայաստանում, այնպես էլ եվրոպական տարածաշրջանի երկրներում:

Շատ դեռահասներ, մեծահասակներ և ռիսկի խմբերի անձինք բավարար տեղեկացված չեն իրենց կյանքին և առողջությանը սպառնացող հիվանդությունների, ինչպես նաև պատվաստումների վերաբերյալ, որոնք կարող էին ապահովել անհրաժեշտ պաշտպանություն:

Իմունականխարգելումն առողջապահության ոլորտում ամենաարդյունավետ ռազմավարություններից մեկն է, երբ փոքր ներդրումներով ապահովվում են մեծ արդյունքներ:

Պատվաստանյութերի լայնածավալ կիրառումն ամբողջ աշխարհում մեծ հեղափոխություն էր վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի գործում, ընդհուպ մինչև դրանց վերացումը: Արդյունքում աշխարհում, ընդհանուր առմամբ, կտրուկ նվազել է ինչպես կառավարելի (պատվաստումներով հսկվող) հիվանդությունների մակարդակը, այնպես էլ այդ հիվանդությունների պատճառով մահվան դեպքերը: Այսօր արդեն փաստ է բնական ծաղկի վերացումը, իսկ պոլիոմիելիտի, կարմրուկի, կարմրախտի, դիֆթերիայի, վիրուսային հեպատիտ Բ-ի վերացումը հնարավոր է և հասանելի:

Սակայն այս նվաճումները մարդկանց կարծես թե հանգստացրին: Ձևավորեց թյուր կարծիք, թե արդեն հազվադեպ հանդիպող հիվանդությունների դեմ այլևս պատվաստումներ կատարելու անհրաժեշտություն չկա: Նման կարծիքը վտանգավոր

է, քանի որ այդ պարագայում կարող են առաջանալ դեռևս մահացու համարվող վարակիչ այդ հիվանդությունների բռնկումներ:

Յուրաքանչյուր ոք պատվաստման մասին երկմտելուց առաջ պետք է գիտակցի, որ հիվանդության առաջացման ռիսկը շատ ավելի բարձր է, քան հետպատվաստումային բարդությունների ռիսկը: Այսպես, ըստ վիճակագրության՝ եթե 1000 կարմրուկով հիվանդից մեկի մոտ է զարգանում էնցեֆալիտ, ապա կարմրուկի, կարմրախտի և խոզուկի դեմ համակցված պատվաստում ստացած մեկ միլիոնից հետպատվաստումային էնցեֆալիտ կարող է զարգանալ մեկի մոտ: Հայաստանի Հանրապետությունում յուրաքանչյուր տարի կատարվում է մոտ 80000-ից 130 000 դեղաչափ կարմրուկ-կարմրախտ-խոզուկ համակցված պատվաստում, և ոչ մի հետպատվաստումային էնցեֆալիտ չի արձանագրվել:

Պատվաստումների շնորհիվ Հայաստանում 1995 թվականից այլևս չի արձանագրվում պոլիոմիելիտ հիվանդությունը, որը նախկինում տարեկան առնվազն 2-3 երեխայի կայուն հաշմանդամության պատճառ էր դառնում: 2002 թվականին Հայաստանը, ի թիվս եվրոպական տարածաշրջանի երկրների, հռչակվել է պոլիոմիելիտից ազատ երկիր և առ այսօր պահպանում է այս կարգավիճակը:

1994-1995 թվականներին Հայաստանում դիֆթերիայի բռնկումից հետո զանգվածային պատվաստումների շնորհիվ համաճարակային իրավիճակը կայունացել է, իսկ վերջին 10 տարվա ընթացքում դեպքեր չեն արձանագրվում:

Հայաստանում կառավարվող վարակիչ հիվանդությունների դեմ պատվաստումներն իրականացվում են ծննդատներում և ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպություններում տարիքային որոշակի խմբերի շրջանում: Ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպություններում յուրաքանչյուր երեխայի հաշվառումից հետո ծնողին տրվում է պատվաստման քարտ, որում մանրամասնորեն ներկայացված են պատվաստանյութերի անվանումները, պատվաստման ժամկետները:

Ներկայում Հայաստանի Հանրապետությունում պլանային պատվաստումների միջոցով կանխարգելվող վարակիչ հիվանդություններն են՝ դիֆթերիա, կապույտ հազ, փայտացում, կարմրուկ, կարմրախտ, համաճարակային պարոտիտ (խոզուկ), ջրծաղիկ, պոլիոմիելիտ, հեպատիտներ «Ա» և «Բ», տուբերկուլոզ, ՀԻՖ, ռոտավիրուսային, մենինգակոկային, պնևմակոկային, մարդու պապիլոմավիրուսային վարակներ, տուլարեմիա, սեզոնային գրիպ, կատաղություն, որոնք ներառված են պատվաստումների ազգային օրացույցում:

## 1. ԿԱՐՄՐՈՒԿ



Յուրաքանչյուր ոք պատվաստման շուրջ երկմտելուց առաջ պետք է գիտակցի, որ հիվանդության առաջացման ռիսկը շատ ավելի բարձր է, քան հետպատվաստումային բարդությունների զարգացման ռիսկը: Ըստ վիճակագրության, եթե 1000 կարմրուկով հիվանդից մեկի մոտ է զարգանում էնցեֆալիտ: Վերջին հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ կարմրուկով հիվանդանալուց հետո անձի մոտ կարող է առաջանալ «իմունային ամնեզիա», իմունային հիշողության կորուստ՝ մոտ 36 ամիս:

Այսինքն տվյալ անձը այդ ժամանակահատվածում լիովին անպաշտպան է և կարող է հիվանդանալ ցանկացած հիվանդությամբ:

## **2.ԻՄՈՒՆԻՏԵՏ**

Իմունիտետն օրգանիզմի պաշտպանական ռեակցիան է: Այն մեր օրգանիզմը պաշտպանում է արտաքին տարբեր ազդակներից, նյութերից, մանրէներից, վիրուսներից և այլ ախտածիններից, ինչպես նաև տարբեր բնույթի թույներից, օտար բջիջներից, նույնիսկ գենետիկորեն վերափոխված սեփական բջիջներից: Անընկալության շնորհիվ օրգանիզմը հայտնաբերում և վնասազերծում է այդ անցանկալի ազդակները:

Տարբերում են բնական և արհեստական անընկալություն: Բնական անընկալությունն իր հերթին կարող է լինել բնածին և ձեռքբերովի: Բնածին բնական անընկալությունը փոխանցվում է ժառանգաբար, սերնդեսերունդ: Այն տեսակային է, բնորոշ է տվյալ տեսակին պատկանող բոլոր անհատներին:

Ձեռքբերովի բնական անընկալությունն առաջանում է կյանքի ընթացքում, երբ մարդը բնական ճանապարհով հիվանդանում է այս կամ այն վարակիչ հիվանդությամբ, և որի հարուցիչների նկատմամբ էլ օրգանիզմում առաջանում են համապատասխան հակամարմիններ:

Արհեստական անընկալությունն առաջանում է մարդու անմիջական միջամտությամբ: Այն կարող է լինել ակտիվ և պասիվ: Ակտիվ արհեստական իմունիտետն առաջանում է, երբ օրգանիզմ են մտցվում տվյալ հիվանդության հարուցիչ հակածինները՝ պատվաստանյութերի ձևով: Իմունային համակարգն օրգանիզմի հզոր պաշտպանական հարմարանքն է ախտածին մանրէների դեմ պայքարելու և նրանց վնասազերծելու համար:

## **3.ԻՆՉՈՒՐ՝ ՊԵՏՔ Ե ՊԱՏՎԱՍՏԵԼ ԵՐԵՄԱՆԵՐԻՆ**



Պատվաստումները լավագույն միջոցն են պաշտպանելու երեխաներին այնպիսի վարակներից ինչպիսիք են դիֆթերիան, փայտացումը, պոլիոմիելիտը, կապույտ հազը, կարմրուկը, կարմրախտը, խոզուկը, վիրուսային հեպատիտ Բ-ն, մենինգիտները և թոքաբորբերը՝ պայմանավորված պնևմոկոկային և հեմոֆիլուսային Բ տիպի վարակներով, ռոտավիրուսային վարակները:

Պատվաստումներն անհրաժեշտ են.

- Որպեսզի կանխարգելվի հիվանդացման դեպքը
- Որպեսզի կանխարգելվի մահը կամ հաշմանդամությունը
- Որպեսզի վարակներից պաշտպանվեն բնակչության սովորական զանգվածները

Պատվաստանյութերը պատրաստված են հիվանդություն առաջացնող մանրէներից, որոնք փոփոխված են այնպես, որ մարդկանց չվնասելով միաժամանակ ապահովեն վստահելի պաշտպանություն: Պատվաստանյութն օրգանիզմում առաջացնում է համապատասխան հակամարմիններ, որոնք բնական վարակի հետ հանդիպելու դեպքում պաշտպանում են հիվանդանալուց: Իսկ եթե նույնիսկ պատվաստված երեխան հիվանդանում է, ապա հիվանդությունն ընթանում է անհամեմատ թեթև: Վարակիչ հիվանդությունները շատ արագ են տարածվում: Սակայն այդ տարածումը կարելի է կանգնեցնել միայն այն պարագայում, երբ տվյալ բնակավայրում պատվաստված մարդկանց թիվը բավարար մակարդակի է (90%-ից ոչ պակաս): Համայնքում որքան շատ

են պատվաստված երեխաները (նաև մեծահասակները), այնքան պաշտպանված է համայնքի յուրաքանչյուր անդամը:

#### 4.ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԸ ԿՅԱՆՔԵՐ ԵՆ ՓՐԿՈՒՄ...



Ամեն տարի ամբողջ աշխարհում պատվաստումներն ավելի քան 1.5 միլիոն կյանք են փրկում, որոնց շնորհիվ միլիոնավոր մարդիկ ամբողջ կյանքում պաշտպանվում են ինչպես ծանր հիվանդություններից, այնպես էլ հաշմանդամությունից:

Ամբողջ աշխարհում, մինչ այլանային պատվաստումների ներդրումը, երեխաների մահվան պատճառների կառուցվածքում վարակիչ հիվանդություններն առաջնային տեղ էին գրավում: Նույնիսկ այսօր մահվան պատճառ են հանդիսանում այնպիսի վարակներ, ինչպիսիք են Բ տիպի հեմոֆիլուսային վարակը, կապույտ հազը, կարմրուկը, նորածինների փայտացումը, պնևմակոկային և ռոտավիրուսային վարակները:

Յուրաքանչյուր տարի ամբողջ աշխարհում մահանում է մոտ 10.6 միլիոն մինչև 5 տարեկան երեխա, որոնցից 1.4 միլիոնը պայմանավորված են այն հիվանդություններով, որոնք կարելի էր կանխարգելել պատվաստումների միջոցով: Կառավարելի վարակիչ

հիվանդությունների պատճառով յուրաքանչյուր տարի ամբողջ աշխարհում մահանում է մոտ 3 միլիոն մարդ, /և երեխա, և մեծահասակ/: Պատվաստումներում ընդգրկվածության բարձր մակարդակը հնարավորություն է ընձեռնում պաշտպանել ազգաբնակչությանը վարակիչ հիվանդություններից և կտրուկ նվազեցնել հաշմանդամության և մահացության ցուցանիշները: Եվ հակառակը, ընդգրկվածության ցուցանիշների իջեցման արդյունքում հիվանդությունները վերադառնում են: Այս պարագայում կարող են ի հայտ գալ և տարածում ստանալ այնպիսի հիվանդություններ, ինչպիսիք են կարմրուկը, պոլիոմիելիտը և դիֆթերիան:

Պատվաստումները պաշտպանում են ոչ միայն պատվաստված, այլ նաև չպատվաստված անձանց, քանի որ պատվաստումների շնորհիվ առաջանում է կոլեկտիվ իմունիտետ և կանխվում է հիվանդությունների տարածումը:

## **5. ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Շատ դժվար է գերազնահատել պատվաստանյութերի ազդեցությունը առողջ ազգաբնակչության վրա, այդ առումով բացառություն է կազմում միայն խմելու ջրի անվտանգությունը: Նույնիսկ հակաբիոտիկները այդպիսի նշանակալի ազդեցություն չեն թողել հիվանդացության և մահացության ցուցանիշների վրա, ինչքան պատվաստումները:

Բոլոր պատվաստանյութերը նախատեսված են հարուցիչի հակաձնի նկատմամբ իմուն պատասխանի ձևավորման համար, որպեսզի հակաձնի հետ կրկնակի հանդիպման դեպքում ապահովի օրգանիզմի հզոր իմուն պատասխան:

Պատվաստանյութերը պարունակում են հակաձիններ, որոնք առկա են բնական հարուցիչներում, սակայն պատվաստանյութերի հակաձինների ազդեցությունը կառավարելի է: Պատվաստման շնորհիվ իմուն համակարգը ոչնչացնում է ախտաձին հարուցիչներին, որոնք օրգանիզմ են ներթափանցում շրջակա միջավայրից՝ կանխարգելելով հիվանդության զարգացումը:


Ակտիվ անընկալության ձևավորման համար գոյություն ունի երկու ճանապարհ՝ բնական վարակ և պատվաստում: Այսինքն, բնական վարակի և պատվաստման արդյունքում ձևավորվում է միևնույն պատասխանը՝ սպեցիֆիկ պաշտպանիչ անընկալություն: Սակայն, այն անձը, ով պատվաստվել է, չի հիվանդանում և չի հանդիպում հիվանդության՝ կյանքի համար վտանգավոր բարդությունների հետ:

Միաժամանակ, պատվաստումների արդյունքում հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի առաջացման ռիսկն անհամեմատ փոքր է, քան հիվանդության արդյունքում առաջացած բարդությունները:

## **6.ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ՊԱՏՎԱՍՏԱՆՑՈՒԹԵՐՆ ԱՅՂՔԱՆ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ...**

- **Պատվաստանյութերը նպաստում են առողջության պահպանմանը:** Ի տարբերություն այլ բժշկական միջամտությունների, պատվաստումներն առողջ մարդկանց օգնում են մնալ առողջ:
- **Պատվաստանյութերն ապահովում են լայնածավալ ազդեցություն:** Պատվաստումները հնարավորություն են տալիս պաշտպանել ինչպես առանձին անհատներին, այնպես էլ ամբողջ ազգաբնակչությանը՝ ապահովելով կոլեկտիվ անընկալություն: Կոլեկտիվ անընկալությունը նվազագույնի է հասցնում վարակների տարածման հավանականությունը և պաշտպանում է նույնիսկ չպատվաստված անձանց:
- **Պատվաստանյութերը թողնում են արագ ազդեցություն:** Պատվաստանյութերի ազդեցությունը հանրության շրջանում գլոբալ առումով դրսևորվում է կարճ ժամանակահատվածում: Օրինակ, 2000-2008թթ. ընթացքում կարմրուկի դեմ իրականացված կանխարգելիչ պատվաստումները հնարավորություն տվեցին մոտ 78%-ով աշխարհում նվազեցնել կարմրուկի մահացության ցուցանիշը:
- **Պատվաստանյութերը փրկում են բազմաթիվ մարդկային կյանքեր և նպաստում են ֆինանսական ռեսուրսների առավել նպատակային օգտագործմանը:** Աշխարհի հայտնի տնտեսագետների կարծիքով, բնակչության գլոբալ բարեկեցության


բարելավմանն ուղղված առավել արդյունավետ 30 տնտեսական միջոցառումների ցանկում 4-րդ տեղը գրավում է ազգաբնակչության շրջանում կանխարգելիչ պատվաստումների իրականացումը և դրանցում բարձր ընդգրկվածությունը:



**Պատվաստումների նվազման արդյունքում Առողջապահության համաշխարհային կազմակերպության եվրոպական տարածաշրջանում դիտվում է կարմրուկի, կապույտ հազի և դիֆթերիայի ակտիվացում**

**ՊԱՏՎԱՍՏՈՒՄԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԵՆ ՁԵՁ ԵՎ ՁԵՐ ՄՏԵՐԻՄՆԵՐԻՆ**

**! ՊԱՏՎԱՍՏՈՒՄԸ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋՈՑ Է**



# ԿԱՊՈՒՅՑ ՀԱՐ



Նորածինների շրջանում կապույտ հազը վտանգավոր է. այն կարող է հանգեցնել ծանր բարդությունների և երբեմն նույնիսկ մահվան:



Ծննդյան առաջին շաբաթներին կապույտ հազից նորածին պաշտպանում է մայրական իմունիտետը, իսկ այնուհետև կապույտ հազի դեմ պատվաստումը:

**!** Ժամանակին ստացած պատվաստումը կարևոր է

**!** ՊԱՏՎԱՍՏՈՒՄԸ ԿԱՊՈՒՅՑ ՀԱՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋՈՑՆ Է

## Ինչպե՛ս չվարակվել, եթե փանը կա կարմրուկով հիվանդ

Հիվանդին հնարավորինս մեկուսացնե՛լ



Հիվանդի հետ սերտ շփված անձին (եթե չի հիվանդացել, չի պատվաստվել կամ թերի պատվաստված է) շփումից հետո 72 ժամվա ընթացքում պատվաստել



Կարմրուկի կանխարգելման ամենաարդյունավետ միջոցը պատվաստումն է



## ՕԳՏԱԿԱՐ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

<https://www.facebook.com/ncdcarm/videos/3195790983966121>

<https://www.facebook.com/ncdcarm/videos/808399300085146>

<https://www.facebook.com/ncdcarm/videos/1038727990081341>

<https://www.facebook.com/ncdcarm/videos/838309190266555>

<https://www.facebook.com/ncdcarm/videos/160323495258350>

<https://www.facebook.com/ncdcarm/videos/2249719828651520>

<https://www.facebook.com/watch/?v=699722918528352>